CIVIC HUB
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱԲ

Արցախի հասարակական կազմակերպությունների հայտարարությունը Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի փակման վերաբերյալ

2022

Արցախի հասարակական կազմակերպությունների հայտարարությունը Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի փակման վերաբերյալ

Արցախի հասարակական կազմակերպությունների հայտարարությունը Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի փակման վերաբերյալ

2022 թ.-ի Դեկտեմբերի 12-ի առավոտյան 10:30 -ից Ադրբեջանը փակել է Արցախը Հայաստանին և արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը: Մեկ օրից ավել է ամբողջությամբ շրջափակման մեջ գտնվող Արցախի 120 000 հայ բնակչությունը զրկված է ոչ միայն արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունից, այլ նաև սննդամթերքի, դեղամիջոցների, էներգակիրների և կյանքի համար առաջնային այլ ապրանքների մատակարարումից:

Ադրբեջանի այս պրովոկացիան տարիներ շարունակ իրականացվող հայատյաց քաղաքականության հերթական դրսևորումն է, որի միակ նպատակը Արցախի հայ բնակչության տեղահանումն է, և այդ միջոցով Լեռնային Ղարաբաղի խնդրի վերջնական լուծումը:

Էթնիկ զտումների և տեղահանման այս քաղաքականությունը ուղեկցվում է մարդու հիմնարար իրավունքների խախտումներով, ինչպես օրինակ ազատ տեղաշարժվելու, սննդի և բժշկական օգնության իրավունքները: Ադրբեջանն այս քայլերով նաև շարունակական հոգեբանական ճնշում և վախի մթնոլորտ է փորձում ստեղծել արցախահայության շրջանում: Այս իրավիճակի տևական շարունակությունը անխուսափելիորեն հանգեցնելու է հումանիտար ճգնաժամի, որը բերելու է մարդկային կորուստների, նոր պատերազմի և տարածաշրջանում լարվածության աճի:

Արցախի՝ աշխարհին կապող միակ ճանապարհը 2020 թվականի նոյեմբերի 9-ի Ռուսաստան-Հայաստան-Ադրբեջան եռակողմ համաձայնագրով գտնվում է ռուս խաղաղապահ զորակազմի վերահսկողության տակ և դուրս է ադրբեջանական վերահսկողությունից: Ադրբեջանի այս քայլերը ոտնահարում էն թե՛ արցախահայության իրավունքները, թե՛ եռակողմ համաձայնագիրը:

Կոչ ենք անում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպություններին, միջազգային դերակատարներին պատշաճ գնահատական տալ Ադրբեջանի հանցավոր գործողություններին և գործուն միջամտություն ցուցաբերել՝ կանխելու հումանիտար վերահաս ճգնաժամը: